# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ՃԱՌԸ ՀԱՄԱԶԳ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

*Հայ եկեղեցու մեծարգո գործիչներ.*

*Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կառավարության անունից և նրա լիազորությամբ դիմում եմ Ձեզ ողջունելով և ցանկանալով Ձեր աշխատանքին հաջողություն։*

*մշտապես աջակցել է ժողովրդի ազգային ինքնուրույնությանը, դաստիարակել է նրա ազգային գիտակցության զգացմունքը, նպաստել է նրա կուլտուրայի զարգացմանը։*

*Հայ եկեղեցու այդ դերը, ազգային միասնության պահպանողի դերը, չի կարող ա-*



*Հայ եկեղեցու օրրան Մայր Աթոռ Էջմիածնում, որը սրբություն է հանդիսանում բոլոր հավատացյալ հայերի համար, Դուք հավաքվել եք, բարձրապատիվ հովվապետնե՛ր, հոգևոր հովիվնե՛ր, աշխարհականնե՛ր, Ձեզնով ներկայացնելով ամբողջ Հայ եկեղեցին, որը առաջները հայ ժողովրդի գոյության ամբողջ ընթացքում, այն ժողովրդի, որը անցյալում կրել է շատ ձախորդություններ, տառապանքներ ու զրկանքներ,*

*վարուած համարվել նաև ներկայումս, մանավանդ հայ ժողովրդի ամբողջ աշխարհում ցրված լինելու պայմաններում։*

*Ազատագրական մեծ պատերազմի օրերին Հայ եկեղեցին անմասն չմնաց։ Նա իր ժամանակավոր ղեկավար արքեպիսկոպոս Գևորգ Չեորեքչյանի կոչով, որը բեղմնավոր քիչ ջանքեր չի դրել Հայ եկեղեցու զարգացման գործի մեջ, անմիջական մասնակցություն ցույց ավեց ազատասեր ողջ մարդ-*

կության և համաշխարհային քաղաքակրթության մահացու թշնամի հիտլերյան Գերմանիայի դեմ մղված պայքարում, այն Գերմանիայի, որը ներկայումս ամբողջովին ջախջախված է հերոսական Կարմիր Բանակի և մեր դաշնակիցների բանակների կողմից։

Սակայն ռազմական հաղթանակը միայն գրավական է հանդիսանում խաղաղությունը կազմակերպելու այնպիսի հիմունքներով, որոնք բացառեին նոր պատերազմի առաջացումը և մարդուս ազատեին մշտական երկյուղի և վաղվա օրվա նկատմամբ անվստահության զգացմունքից։

Այդ խնդիրը լուծելու համար աշխատում են լավագույն մտածողները և, իհարկե, նրանց ջանքերը անհետևանք չեն մնա։

Այժմ ազատասեր բոլոր ազգերի առաջ ծառացել է նաև մի այլ ոչ պակաս պատասխանատու խնդիր՝ ակտիվորեն աջակցել ոչ միայն այդ սկզբունքների մշակմանը, այլև գլխավորապես բոլոր ուժերը մոբիլիզացնել այդ սկզբունքները գործնական կյանքում կիրառելու համար։ Աշխարհի մութ, ռեակցիոն ուժերը զենքը ամենևին ցած չեն դրել և նրանց դեմ մեզ սպասում է դեռևս համառ պայքար։

Թույլ տվեք իմ վստահությունը հայտնել, որ Հայ եկեղեցին խաղաղ շինարարության բնագավառում ևս ջերմ մասնակցություն ցույց կտա՝ կոչ անելով այդ գործին մասնակցելու իր բոլոր անդամներին։

Ժողովը կոչված է նաև լուծելու Հայ եկեղեցու ներքին կառուցվածքի շատ կարևոր հարցեր և ընտրելու այդ եկեղեցու իմաստուն, փորձված, արժանավոր ղեկավար՝ Գերագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս։

Ես հաստատ համոզված եմ, որ Ձեր քննարկման ենթակա այդ հարցերը միահամուռ և հաջող լուծում կստանան։

Ժողովի հարգո պատգամավորնե՛ր, Դուք հավաքվել եք ժողովի Սովետական երկրում, այն երկրում, որը ընդմիշտ թոթափել է դավանաբանական, ռասայական, ազգային սահմանափակումների ու ճնշումների կապանքները, այն երկրում, որտեղ ազդարարվել և անսասան կենսագործվում է ժողովրդի լիակատար ազատությունը, որտեղ գոյություն ունի առանց բացառության կրոնական բոլոր կազմակերպությունների իրավահավասարություն։ Եվ այդ անշուշտ կընպաստի ժողովի բեղմնավոր աշխատանքին։

Կառավարության լուծումը պահանջող պաշտամունքի հարցերի գծով Սովետական Միության Կառավարության և կրոնական կազմակերպությունների միջև կապ սահմանելու համար ստեղծվել է ՍՍՌ Միության Ժողկոմսովետին կից կրոնական պաշտամունքների գործերի Խորհուրդ։

Խորհրդի հիմնական խնդիրն է հանդիսանում՝ նպաստել նորմալ հարաբերությունների հետագա զարգացմանը կրոնական միավորումների և պետության միջև և ամեն միավորումների գործունեության վերաբերող Կառավարության օրենքներն ու որոշումներն առանց որևէ կերպ միջամտելու նրանց ներքին կյանքին։

Պետք է ուղղակի ասել, որ Խորհրդի և Հայ եկեղեցու ղեկավարության միջև այնպիսի հարաբերություններ են հաստատվել, որոնք նպաստել են Հայ եկեղեցու հետ կապված բոլոր հարցերի լուծմանը։ Ես ինձ թույլ կտամ հաստատ հույս հայտնել, որ հետագայում սահմանված փոխհարաբերությունների հիման վրա ՍՍՌ Միության Ժողկոմսովետին կից կրոնական պաշտամունքի գործերի Խորհուրդը Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ եկեղեցու գործերի Խորհրդի հետ միասին ձգտելու է ոչ միայն վերացնել Հայ եկեղեցու ճանապարհին եղած ամեն տեսակ խոչընդոտները, այլև աջակցելու նրա հետագա կազմակերպման ամրապնդմանը։

Վերջում թույլ տվեք մի անգամ ևս Ձեզ բոլորիդ հայտնել հաջողության անկեղծ ցանկություններ ժողովի առաջիկա աշխատանքներում։

(«Սովետ. Հայաստան», 17 հունիսի 1945 թ., № 121 (7374)